113 *Ունին Մեծն*[1] *Հայք [լերինս*[2] *անուանիս եւ գետս մեծամեծս եւ մանունս, եւ ծովակս վեց*[3]*:* 114 *Եւ ունի Մեծ Հայք]*[4] *շուրջ զիւրեւ գաւառս*[5] *հնգետասան*[6]*, որք են այսք*[7]*:* 115 *Ա. Առաջին*[8] *աշխարհ՝ Բարձր Հայք, այսինքն՝ Կարնո[յ] քաղաք*[9]*. Երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայք, [այսինքն՝ [Ծոփք]]*[10]*. Երրորդ*[11]*՝ Աղձնիք առ Տիգրիս գետով. չորրորդ*[12]*՝ Տարուբերան, որ է Տարաւն. հինգերորդ՝ Մոկք*[13]*, որ առ Ասորեստանեաւ. վեցերորդ*[14] *աշխարհ՝ Կորճէք. եւթներորդ*[15] *աշխարհ՝ Պարս[կ]ահայք*[16]*, որ [առ]*[17] *Ատրապատականիւք*[18]*. ութերորդ*[19] *աշխարհ՝ Վասպուրական, որ ըստ մտից հիւսիսո[յ] նորա է. իններորդ*[20] *աշխարհ՝ Սիւնիք, որ առ Երասխաւ. տասներորդ*[21]*՝ Արձախ, որ յերի նորա կա[յ]. մետասաներորդ*[22] *աշխարհ՝ Փայտակար*[23]*՝ քաղաքով*[23]*, որ առ եգերբն*[24] *Կասբից, ի մուտս Երա[ս]խա[յ]*[25]*. երկոտասաներորդ*[26] *աշխարհ՝ Ուտէացո[ւ]ց*[27]*, որ առ Աղուանիւք եւ Կուր գետով. երեքտասաներորդ*[28] *աշխարհ՝ Գուգարք*[29]*, որ առ Վրաւք. չորեքտասաներորդ*[30] *աշխարհ՝ Տայք, որ ա[ռ] Եգերբ*[31]*. հնգետասաներորդ*[32] *աշխարհ՝ Ա[յ]րարատ*[33]*՝ ի մէջ նոցա:* 116 *Արդ՝ [կամիմ զդոսա մանրամասնաբար պատմել, թէ եւ սակաւ ինչ աշխատիցիմ ի գիր եւ ի քարտէս*[34]*:*

117 *Ա. Արդ՝]*[35] *ունի առաջին աշխարհ գաւառս ինն*[36]*. Դարանաղի, Աղիւն, Մզուր, Եկե-*

---

1 *S* ԻԲ. Ունին Մեծ *[իբրեւ առանձին գլխի սկիզբ] փխ* Ունին Մեծն *(V. համառոտում՝* Եւ ունի Մեծ. *V-ում* «Ունին Մեծն Հայք» *եւ յաջորդող տողի բառերը* («շուրջ զիւրեւ գաւառս ... այսք») *կարմրով են. լուսանցքում ուշ ձեռքով պատուոյ նշաններով «ծնթ-գրուած» է 2 տող՝* «աշխարհ / Հայոց»*)*

2 *AE* լերունս *փխ* լերինս *(DPv)*

3 *AEv*[2] երիս *փխ* վեց *(DPv)*

4 *VS չիք* լերինս ... Հայք *(2 տող) (վեր.՝ ըստ համտի, տե՛ս* **ունին Մեծն Հայք ... ունի Մեծ Հայք***)*

5 *ADEPv* փոքր աշխարհս *փխ* շուրջ ... գաւառս *(VS)*

6 *V* ծե

7 *ADEPv* այսոքիկ *փխ* այսք *(VS)*

8 *Բառի կողքի լուսանցքում գրուած* ա *գլխահամարը գրչի մի վրիպում է (տե՛ս նախ. Ե.117-ի ծնթ.)*

9 *AE* կողմն *փխ* քաղաք *(VS. բառը գրուած է* Թ*յ-անման գաղափարագրով. Բ. Յարութիւնեանը վերականգնելի է համարում* «այսինքն՝ Կարնո[յ] աշխարհ» *կամ* «[յորում] Կարնո[յ] քաղաք»*. հաւանականն առաջինն է՝ ենթադրելով, որ գրիչը շփոթութեամբ կիրառել է* քաղաք *բառի գաղափարագիրը՝ փխն* աշխարհ*-ի կամ, որ աւելի հաւանական է՝* երկիր*-ի* ձ*-անման գաղափարագրի) / DPv* որ է կողմ Կարնոյ *փխ* այսինքն ... քաղաք

10 *VS չիք* այսինքն՝ [Ծոփք] *(վեր.՝ կիսատ համառոտից (AE-ում լոկ* այսինքն *է, DPv-ում՝ չիք)՝ ըստ Երեմեանի, ով վերականգնում է* «այսինքն՝ [Ծոփաց կողմն]»*, սակայն տե՛ս* Հայք ... Ծոփք*)*

11 *V* գ *փխ* երրորդ *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի)*

12 *V* դ *փխ* չորրորդ *(վեր. Սուքրեանի)*

13 *V* ե Մոգք *փխ* հինգերորդ՝ Մոկք *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ե.145, 147՝* Մոկաց*)*

14 *V* զ *փխ* վեցերորդ *(վեր. Սուքրեանի)*

15 *V* է, *S* եօթներորդ *փխ* եւթներորդ *(վեր.՝ ըստ նախորդների. տե՛ս նաեւ նախ. Ա.8, Բ.10, 16, 18)*

16 *V* ապարսահայք *փխ* Պարս[կ]ահայք *(վեր. Սուքրեանի՝ ըստ յաջորդի, տե՛ս նախ. Ե.150)*

17 *V չիք* առ *(վեր. Սուքրեանի, հմմտ. 2 տող վերեւ)*

18 *S* Ատրպատականիք *փխ* Ատրապատականիք *(V. հմմտ. ստորեւ, նախ. Ե.150, 247)*

19 *V* ը *փխ* ութերորդ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս, օր.՝ նախ. Ե.115-ի սկզբում)*

20 *V* թ *փխ* իններորդ *(վեր. Սուքրեանի)*

21 *V* ժ *փխ* տասներորդ *(վեր. Սուքրեանի)*

22 *V* ժա *փխ* մետասաներորդ *(վեր. Սուքրեանի)*

23 *Ըստ Երեմեանի՝* «[համանուն] քաղաքով»

24 *V* երերբն *փխ* եզերբն *(վեր. Սուքրեանի)*

25 *V* Երախա *փխ* Երա[ս]խա[յ] *(վեր. Սուքրեանի)*

26 *V* բժ *փխ* երկոտասաներորդ *(վեր. Սուքրեանի)*

27 *VS* Ուտէացոց *փխ* Ուտէաց[ւ]ոց *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

28 *V* գզ *փխ* երեքտասաներորդ *(վեր. Սուքրեանի)*

29 *V* ագուգարք *փխ* Գուգարք *(վեր. Սուքրեանի՝ ըստ Ե.169. սկզբի* ա*-ն արդեո՞ք եղել է «մի» (=«միւս»))*

30 *V* դժ *փխ* չորեքտասաներորդ *(վեր. Սուքրեանի)*

31 *V* աէգերբ *փխ* առ Եգերբ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ե.91, 92, 95, 176)*

32 *V* եժ *փխ* հնգետասաներորդ *(վեր. Սուքրեանի)*

33 *VS* Արարատ *փխ* Ա[յ]րարատ *(վեր. ըստ Ե.157,178)*

34 *AE* քարտեզ *փխ* քարտէս *(DPv)*

35 *VS չիք* կամիմ զդոսա ... Ա. Արդ *(3 տող) (վեր.՝ ըստ համառոտի. տե՛ս* **Արդ ... Արդ***. պարբերութեան մօտ մեր նշանակած գլխահամարը կարելի է եւ չհամարել վերականգնում, քանի որ, թերեւս, հէնց այն էր գրիչը տեսել նախագաղափարում եւ շտապողաբար տեղադրել նախորդ պարբերութեան երրորդ նախադասութեան կողքի լուսանցքում, տե՛ս նախ. Ե.115-ի առաջին ծնթ.)*

36 *V* թ